ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԼԻՏՎԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Ապրիլի 5-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց պաշտոնական այցով Հայաստան ժամանած Լիտվայի Հանրապետության Ազգային պաշտպանության նախարար Գեդիմինաս Կիրկիլասին և վերջինիս գլխավորած պատվիրակությանը՝ ՀՀ ՊՆ փոխնախարար գեներալ-լեյտենանտ Արթուր Աղաբեկյանի և ՀՀ բանակի հոգևոր առաջնորդ Տ. Նորայր աբդ. Սիմոնյանի ուղեկցությամբ:

Հանդիպման ընթացքում խոսվեց երկու երկրների բարեկամական հարաբերությունների և պաշտպանության նախարարությունների միջև առկա համագործակցության և ապագա ծրագրերի մասին:

Հռոմի Քահանայապետ Հովհաննես-Պողոս Բ Պապի մահվան առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր ցավակցություններն ուղղեց Լիտվիայի ժողովրդին, որի մեծամասնությունը Կաթոլիկ Եկեղեցու հետևորդ է:

Հանդիպմանը անդրադարձ կատարվեց նաև երկու երկրներում Եկեղեցի-պետություն հարաբերություններին, ինչպես նաև ՀՀ բանակում Հայ Եկեղեցու սպասավորների հոգևոր ծառայությանը:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀՀ-ՈՒՄ ԿԻՊՐՈՍԻ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԴԵՍՊԱՆԻՆ

Ապրիլի 19-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Կիպրոսի նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Լեոնիդաս Պանտելիդեսին:

Հանդիպման ընթացքում խոսվեց երկու ժողովուրդների միջև առկա ջերմ հարաբերությունների մասին: Կարևոր նկատվեց երկու երկրների կապերի հետագա սերտացումն ու համագործակցության ձևավորումը: Վեհափառ Հայրապետը և Կիպրոսի դեսպանն անդրադարձան նաև Եկեղեցի-պետություն հարաբերություններին: